

ՕՏԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Նորերս Պարիզում լոյս տեսան երկու փոքրիկ բրօշիւրներ Ֆրանսերէն լեզուով, «La Pologne et la crise Russe» մի ընդհանուր վերնագրով, որոնց մէջ շատ համառօտ բայց և շատ ազդու նկարագրուած է լեհացիների վիճակը Ռուսիայում:

Օգտուելով «Вѣстникъ Европы» ամսագրի վերջին համարից, առաջ ենք բերում այդ բրօշիւրներից մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ: Մի տետրակում հեղինակն ասում է, «ռուս-լեհական յարաբերութիւնները չեն կարող աւելի վատ լինել, քան այժմ են: Լեհ ժողովուրդը բիւրօկրատիայի ձեռքում կրում է խորը տանջանքներ: Սկսուած 1863 թուից ոչ միայն չարաբաղդ ապստամբութեան ժամանակակիցներն են ենթակայ վրիժառութեան, այլ և հետագայ սերունդները. որդիները դաժան պատիժների են արժանանում իրանց հայրերի մեղքերի համար: Լեհաստանը զրկուել է ոչ միայն ազգային, այլ և կենսական իրաւունքներից: Իւրաքանչիւր լեհացի համարում է պետական յանցաւոր լով այն պատճառով, որ նրա երակների մէջ լեհական արիւն է հոսում: Հրատարակուել են մի շարք բացառիկ օրէնքներ և գաղտնի հրամաններ, որոնք լեհերին դարձրել են վերջին տեսակի քաղաքացիներ: Ռուս պաշտօնեաները հեղեղել են երկիրը և լեհերին զրկել ոչ միայն խոշոր, այլ և ամենահասարակ և անշաւ գործերում մասնակցելու իրաւունքից: Բիւրօկրատիան ոչ մի փորձ չի արել ուս լեհական յարաբերութիւնները բարւոքելու, ընդհակառակը, ջանացել է աւելի խորացնել երկու ազգերի մէջ բացուած անդունդը: Լեհական լեզուն հալածուած է և արհամարհուած: Նրա գործածումը արգելւում է մինչև անգամ այն դէպքերում, երբ թոյլատրուած է գերմաներէն և ուրիշ օտար լեզուների գործածութիւնը: Առանձնապէս հալածուել է լեհ լեզուն դրպրոցներում: Լեհ երեխաները տեսնելով, որ դպրոցների վարչութիւնը ատում և արհամարհում է իրանց մայրենի լեզուն, կրօնը և ազգային պատմութիւնը, տոգորւում են փոխադարձատեղութեամբ դէպի իրանց ուս ուսուցիչները: Լեհերը տեսնում են, որ դպրոցների նպատակը բոլորովին լոյս տարածելը չէ, որ ուսուսանողները ոչ թէ կրթողներ են, այլ քաղաքական գործակալներ, որ դպրոցական վարչութեան մէջ տիրում է չոր ու ցամաք ձևականութիւն, միացած անբարեխղճութեան հետ, որ, հեղինակի ասելով, հրեշային չափերի է հասել:

մանաւանդ Ապուխտինի հոգաբարձութեան ժամանակ,—և կամայ ակամայ ատոււմ են ամեն ինչ, որ ուսուսկան է:

Բիւրօկրատիան հրել է իրանից նոյն իսկ գիւղական դասը, որ 40 տարի սրանից առաջ ուսուսկանութեան կողմնէր անցել այդ ժամանակուայ հողային բարենորոգումների շնորհով: Այժմ գիւղացիների ահագին մեծամասնութիւնը զգում է իւր վրայ ուսուսկանութեան մանրակրկիտ վարչութեան ծանրութիւնը:

Այս խօսքերին ուսուսկաններն իւր կողմից աւելացնում է Պրուսիայումն էլ հալածում են լեհացիներին, բայց պրուսացիները, այսուամենայնիւ, լաւ և ազնիւ կառավարիչներ են, իսկ ուսուսկանացիները՝ կարող են համեմատուել տաճկական պաշտօնեաների հետ: Լեհաստանի մի քանի գաւառները միանգամայն յիշեցնում են տաճկական վիլայեթներ իրանց վարչական եղանակով և յետմնացութեամբ: Այդ տեղերում չը կան ոչ դպրոցներ, ոչ բարեգործական ապաստարաններ, ոչ հիւանդանոցներ, և ոչ նոյն իսկ յարմար ճանապարհներ, թէև այս բոլորի համար ժողովրդից հաւաքւում են առատ տուրքեր:

Կարծես, բիւրօկրատիան լեհացիներին ենթարկում է ամեն հալածանքի դիտմամբ, որպէս զի վերջի վերջոյ հարկադրի լեհ ժողովրդին ոտքի կանգնել, որ յետոյ ինքն իրաւունք ունենայ ասելու թէ լեհացիները ըմբոստ ազգ են, միշտ նրանց պիտի պահել երկաթէ ճիւղերի մէջ: Սակայն լեհացիները գիտեն այս և երբէք չեն վստահանալ անհաւասար կռուի մէջ մտնել ինչպէս այդ արին 1863 թուին: Նրանք ուսուսկան զօրքի դէմ չունեն թշնամական զգացում և չեն կարող ունենալ թէկուզ հէնց այն պատճառով, որ այդ զօրքի մէջ Հեռաւոր Արեւելքում ներկայումս կուում են ուսուսկան թշնամու դէմ տասնեակ հազարաւոր լեհացիներ: Ոչ մի բարեխիղճ ուսուսկան հայրենասէր չը պիտի զարմանայ, որ լեհացիները խորապէս ատոււմ են ուսուսկան բիւրօկրատիան: Ուսուսկանութեանը մի զարմանալի կամակորութեամբ լեհ ժողովրդին ներշնչում են այն համոզումը, թէ պատկանել ուսուսկանութեանը—կըշտանակէ լինել իրաւագործ և ոչնչութիւն: Ասողներ կան, թէ իրանք լեհացիները հաւատ չեն տաժում դէպի ուսուսկան, ատոււմ են նրան և թէ մինչև որ նրանց այս վերաբերմունքը չը փոխուի, չի կարելի ուսուսկանութեան քաղաքականութեան մէջ փոփոխութիւնների սպասել: Բայց միթէ կարելի է լեհերից պահանջել հաւատ և հաւատարմութիւն ներկայ պայմաններում: «Եթէ Պետութիւնը, աւարտում է իւր խօսքը հեղինակը իւր բրօշխաններից մէկում,

—Կարող է դէպի մեզ, լեհացիներս հաւատ տածել միայն այն պայմանով, որ մենք հրաժարուենք մեր ազգայնութիւնից, մեր լեզուից, մեր կրօնից, թող երբէք նա հաւատ չը տածի, որովհետեւ երբէք մենք չենք արժանանալ նրան»:

Նոյն հեղինակը իւր միւս բրօշիւը լրացնում է իւր ասածները փաստերով: Ընդհանրապէս նա դէպի ոուս ազգը ատելութեան ոչ մի նշոյլ ցոյց չի տալիս: Նա բողոքում է միայն վարչական սխտեմի դէմ և յոյս է յայտնում, որ փոխուելով կարգ ու կանոնները, կը փոխուեն դէպի լաւն և լեհացիներէ յարաբերութիւնները դէպի ոուս պետութիւնը:

* * *